ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/21

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Գալստյանի (Վկայական՝ 03Ա 084738)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/998-19 գրությամբ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 17.01.2019թ. թիվ ԴՎԱ/246 գրության հիման վրա, 25.01.2019թ.

թիվ 27/26-3/998-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Եվրոֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 29.01.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Եվրոֆարմ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ 9/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի թիվ 12-րդ և 50-րդ չափաբաժիններին:

Աճուրդի արդյունքում նշված չափաբաժինների ամենացածր գինը առաջարկվել է Ընկերության կողմից և Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով և ժամկետում նշված երկու չափաբաժինների համար ներկայացվել է որակավորման փաստաթղթեր: Սակայն 08.01.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացվել է ծանուցում տեխնիկական բնութագրի շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են թիվ 12-րդ և թիվ 50-րդ չափաբաժինների մասով շտկված փաստաթղթերը, որի վերաբերյալ էլեկտրոնային համակարգում կանաչ տողով ստացվել է «Հաջողվեց» նշումը: Ընկերությունը նշել է, որ հետագայում պարզվեց, որ տեխնիկական պատճառներով 50-րդ չափաբաժնի շտկված փաստաթղթերը կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում: Գնահատող հանձնաժողովի կողմից նշվել է, որ 50-րդ չափաբաժնի մասով շտկված տեխնիկական բնութագիրը այլ փաստաթղթերի հետ միասին համակարգում կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում և հանձնաժողովը տեխնիկապես գնահատելու հնարավորություն չունենալու պատճառով 50-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժել է:

Ընկերությունը հայտնել է, քանի որ Ընկերությունը ներկայացրել է ամենացածր գինը և փաստացի ունի տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ապրանք, անհրաժեշտության դեպքում կարող է թղթային տարբերակով տեխնիկական բնութագիրը ներկայացնել:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը ֆունդամենտալ առումով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստացել է, իսկ տեխնիկական առումով ճշգրտված տեխնիկական բնութագիրը, որը այնուամենայնիվ Ընկերության կողմից ներկայացված է եղել, գնահատող հանձնաժողովը պետք է հաշվի առներ և չմերժեր Ընկերության հայտը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/21 ընթացակարգի շրջանակներում 31.01.2019թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.01.2019թ. թիվ ԴՎԱ/246 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի կարիքների համար դեղորայքի գնման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6 ծածկագրով ընթացակարգին Eauction համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել թվով 7 մասնակիցներ, այդ թվում՝ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն:

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 12-րդ և 50-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 08.01.2019թ. Eauction համակարգի միջոցով ծանուցվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով նարկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 08.01.2019թ. կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Պատվիրատուն հայտնել է, որ սահմանված ժամկետի ավարտից հետո գնահատող հանձնաժողովի ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 50-րդ չափաբաժնի մասով eauction համակարգում նախատեսված դաշտում շտկված փաստաթղթեր չեն կցվել (դրանք այլ փաստաթղթերի հետ միասին համակարգում կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում) և հանձնաժողովը տեխնիկապես գնահատելու հնարավորություն չուներ: Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով, այն փաստը, որ մասնակցի կողմից 50-րդ չափաբաժնի դաշտում փաստաթղթեր չեն կցվել, համակարգին հնարավորություն չի տալու տվյալ չափաբաժնի մասով հետագայում մասնակցին պայմանագիր շնորհելու, ուստի հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժել, միաժամանակ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 31.01.2019թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (Այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության (Հավելված թիվ 1) համաձայն՝ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն Աճուրդի 12-րդ և 50-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 08.01.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12-րդ և 50-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է ներառել Աճուրդի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Աճուրդի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետով արձանագրել է, որ քննարկելով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով, որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 12-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան, իսկ 50-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան, այն հիմանվորմամբ, որ Ընկերության կողմից 50-րդ չափաբաժնի մասով Eauction համակարգում նախատեսված դաշտում շտկված փաստաթղթեր չեն կցվել (դրանք այլ փաստաթղթերի հետ միասին համակարգում կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում) և հանձնաժողովը տեխնիկապես գնահատելու հնարավորություն

չունի, բացի այդ այն փաստը, որ մասնակցի կողմից 50-րդ չափաբաժնի դաշտում փաստաթղթեր չեն կցվել, համակարգին հնարավորություն չի տալու տվյալ չափաբաժնի մասով հետագայում մասնակցին պայմանագիր շնորհելու:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Աճուրդի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, 50-րդ չափաբաժնի մասով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/998-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.01.2019թ. թիվ ԴՎԱ/246 գրությունը և կից փաստաթղթերը, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի 29.01.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ ***արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝***

1) ***շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.***

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության (Հավելված թիվ 1) համաձայն՝ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն Աճուրդի 12-րդ և 50-

րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 08.01.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12-րդ և 50-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է ներառել Աճուրդի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Աճուրդի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետով արձանագրել է, որ քննարկելով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով, որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 12-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան, իսկ 50-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից 50-րդ չափաբաժնի մասով Eauction համակարգում նախատեսված դաշտում շտկված փաստաթղթեր չեն կցվել (դրանք այլ փաստաթղթերի հետ միասին համակարգում կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում) և հանձնաժողովը տեխնիկապես գնահատելու հնարավորություն չունի, բացի այդ այն փաստը, որ մասնակցի կողմից 50-րդ չափաբաժնի դաշտում փաստաթղթեր չեն կցվել, համակարգին հնարավորություն չի տալու տվյալ չափաբաժնի մասով հետագայում մասնակցին պայմանագիր շնորհելու:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Աճուրդի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, 50-րդ չափաբաժնի մասով

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել է:

ՍՑ-ԱՄ-2019/21 ընթացակարգի քննության նպատակով հրավիրված նիստի շրջանակներում «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ 9/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի թիվ 12-րդ և 50-րդ չափաբաժինների մասով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որից հետո սահմանված կարգով և ժամկետում նշված երկու չափաբաժինների համար ներկայացվել է որակավորման փաստաթղթեր: Սակայն 08.01.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացվել է ծանուցում տեխնիկական բնութագրի շտկման վերաբերյալ, որին ի պատասխան՝ սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են թիվ 12-րդ և թիվ 50-րդ չափաբաժինների մասով շտկված փաստաթղթերը, սակայն հետագայում պարզվել է, որ տեխնիկական պատճառներով 50-րդ չափաբաժնի շտկված փաստաթղթերը Ընկերության կողմից կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 ենթակետով արձանագրել է, որ քննարկելով «Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով, որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 12-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան, իսկ 50-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից 50-րդ չափաբաժնի մասով Eauction համակարգում նախատեսված դաշտում շտկված փաստաթղթեր չեն կցվել (դրանք այլ փաստաթղթերի հետ միասին համակարգում կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում) և հանձնաժողովը տեխնիկապես գնահատելու հնարավորություն չունի:

Այսպիսով, Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի,

իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ ***արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝***

1) ***շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.***

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկվում է, ապա հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից 50-րդ չափաբաժնի շտկված փաստաթղթերը Eauction համակարգում թյուրիմացաբար կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում, այնուամենայնիվ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Աճուրդի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը, քանի որ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն շտկման վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված մեկօրյա ժամկետում փաստացի կատարել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու և ուղարկելու պարտականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Եվրոֆարմ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/998-19 գրությամբ «Եվրոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**